

**Կ Ա Ր Ծ Ի Ք**  
**ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱՆՈՄԻ**

Սվետլանա Արմենի Մուրադյանի Հ.00.03 - «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված «Հարկային քաղաքականության բարելավման ուղիները ՀՀ լեռնահանքային արդյունաբերության ոլորտում» թեմայով ատենախոսության վերաբերյալ

*Ատենախոսության թեմայի արդիականությունը*

Տեսության մեջ և գործնականում ներկայումս կարևորվում է հարկաբյուջետային քաղաքականության վարումը ոչ միայն գանձապետական նկատառումներով, այլև հարկման արդարության և հարկային մուտքերի հասցեագրված վերաբաշխման տեսանկյունից: Այս առումով, արժեքավոր է համարվում Սվետլանա Մուրադյանի ատենախոսությունը, որտեղ հանքարդյունաբերությունում շեշտադրումներ են կատարվում հարկային քաղաքականության ոչ միայն ֆիսկալ նպատակադրի, այլև հակային մուտքերի հավաքագրումների սոցիալ-տնտեսական համարթեցման կարգավորիչ դերակատարման վրա: Կատարված հետազոտությունում հարցադրումներ են կատարվում այն առումով, որ բնօգտագործման վճարի քաղաքականությունն իրականացնելիս կարևորություն պետք է տրվի ոչ միայն հանքաքարի ռեսուրսների անարդյունավետ արդյունահանման զսպող մեխանիզմներին, այլև հարկային կարգավորիչ լծակներով արդյունահանման գերշահույթների արդարացի վերաբաշխումներին:

Փորձը ցույց է տալիս, որ ՀՀ լեռնահանքային արդյունաբերության ոլորտի հարկազանձման գործընթացում անհրաժեշտություն է առաջանում վարելու այնպիսի հարկային քաղաքականություն, որով ներդաշնակություն կստեղծվի տարբեր հարկատեսակների գծով պարտավորությունների ձևավորման շրջանակում: Այս առումով, հարկազանձումը լեռնահանքային արդյունաբերության ոլորտում հնարավորինս պետք է կառուցվի հարկերի հիմնական գործառույթների հայեցակարգի վրա, հաշվի առնելով ինչպես գանձապետական, այնպես էլ վերահսկողական ու մոտիվացիոն մոտեցումները: Ի լրումս դրա, լեռնահանքային արդյունաբերության ոլորտում հարկային հավաքագրումներն ու բաշխումները օժանդակելու են ոչ միայն հանրապետության տարածքային զարգացվածության համահարթեցմանը, միաժամանակ պետք է թիրախա-

վորվի այն մարզերի սոցիալ տնտեսական զարգացմանը, որտեղ առավել ակտիվ է ընթանում հանքագործական գործունեությունը:

Հետևաբար, լեռնահանքային արդյունաբերությունում վարվող հարկային քաղաքականության վերոնշյալ հիմնախնդիրների լուծման ուղիների առաջադրումներով է պայմանավորված ատենախոսության թեմայի արդիականությունը:

### *Ատենախոսության նպատակը*

Հետազոտության նպատակն է հանդիսացել ներկայացնել ՀՀ լեռնահանքային արդյունաբերությունում իրականացվող հարկային քաղաքականության բարելավման ուղիներ, որոնք կնպաստեն ոլորտում հարկազանձման արդյունավետության բարձրացմանը՝ հնարավորինս լիարժեք դարձնելով ինչպես հարկերի ֆիսկալ, այնպես էլ վերահսկողական ու մոտիվացիոն գործառույթները:

### *Ատենախոսության կառուցվածքը և հիմնական բովանդակությունը*

Ատենախոսությունը շարադրված է 116 էջ ծավալով /առանց հավելվածի/, բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացություն բաժնից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից:

Ատենախոսության ներածությունում հիմնավորվել է թեմայի արդիականությունն ու հրատապությունը, ներկայացվել են հետազոտության նպատակն ու խնդիրները, օբյեկտը և առարկան, գիտական արդյունքներն ու նորույթը, ստացված արդյունքների գիտագործնական նշանակությունը, ինչպես նաև հետազոտության տեղեկատվական հիմքերը:

Ատենախոսության առաջին՝ *«Լեռնահանքային արդյունաբերությունում հարկային քաղաքականության իրականացման առանձնահատկությունները»* գլխում քննարկվում են հարկային արդյունավետ քաղաքականության տեսամեթոդաբանական մոտեցումները: Ատենախոսության երկրորդ՝ *«Բնապահպանական հարկերի և բնօգտագործման վճարների ձևավորման քաղաքականության բարելավման ուղիները մետաղների հանքարդյունաբերությունում»* գլխում իրենց մեկնաբանություններն են ստանում բնական ռեսուրսների օգտագործման դիմաց հարկային մուտքերի և դրանց օգտագործման քաղաքականության հիմնախնդիրների լուծման ուղիները:



Ատենախոսության երրորդ՝ «Հարկային քաղաքականության արդյունավետության գնահատման հիմնախնդիրները ՀՀ լեռնահանքային արդյունաբերությունում» գլխում ներկայացվում են հարկային հոսքերի և դրանց առնչվող շահառուների սպասումների տեղակատվական հաշվետվողականության համակարգման հիմնախնդիրների լուծումներ: «Եզրակացություն» բաժնում ամփոփվել և համառոտ ներկայացվել են հետազոտության հիմնական եզրակացությունները:

### ***Ատենախոսության գիտական արդյունքները և նորույթը***

Ատենախոսությունում իրականացված ուսումնասիրությունների և վերլուծությունների հիման վրա հեղինակը ստացել է տեսական և գործնական նշանակության մի շարք արդյունքներ, որոնց գիտական նորույթի կետերը ձևակերպվել են հետևյալ կերպ.

- ոռոգման հաշվարկման դրույքաչափին հավելումներ կատարելիս առաջակվել է հիմք ընդունել ոչ թե ներկայումս կիրառվող հարկվող շահույթ/իրացման շրջանառություն հարաբերակցությունը, այլ հաշվապահական շահույթ/արդյունահանման ինքնարժեք հարաբերակցությունը, որով հանքարդյունաբերության արդիականացման գծով գործնական ակտիվություն կդրսևորվի հարկերի խթանիչ գործառույթներում,

- առաջարկվել է թափոնների գծով բնապահպանական ֆոնդերի աստիճանակարգային ձևավորման մոտեցում, որով հասցեագրելով բնապահպանական հարկերի վերաբաշխումը, թափոնների կառավարման լրացուցիչ գործառույթներ է դրվում լեռնահանքային կազմակերպությունների վրա և հարկազանձման շարժառիթներ ձևավորում թափոնների վերամշակման ակտիվացման ուղղությամբ,

- հաշվետվական տեղակատվական հոսքերի համակարգման նպատակով առաջարկվել են մի շարք նոր կառավարչական հաշիվներ և հաշվային թղթակցություններ, որոնք հաշվեկշռում են լեռնահանքային կազմակերպության հարկազանձման արդյունքներն ու դրանցից բխող համայնքային սոցիալ-տնտեսական հետևանքները,

- մշակվել են լեռնահանքային արդյունաբերության ոլորտի հարկաբյուջետային քաղաքականության հայեցակարգային նոր մոտեցումներ, հիմնված

հարկերի հավաքագրման և վերաբաշխման հաշվետվողականության վրա, որով գնահատականներ են տրվում հարկազանձումից ձևավորված ֆինանսական ռեսուրսների վերաբաշխման և օգտագործման փաստացի արդյունքներն:

### Դիտողություններ ատենախոսության վերաբերյալ

Իմ կարծիքով՝ ատենախոսությունը գերծ չէ թերություններից, որոնցից հարկ է նշել հետևյալը.

1. Ատենախոսությունում լեռնահանքային արդյունաբերության միայն մետաղական հանքարդյունաբերության հիմնախնդիրներն են ուսումնասիրվել, այն դեպքում, երբ Հայաստանն ունի նաև ոչ մետաղական հանքանյութերի հարուստ և բացառիկ պաշարներ, որոնք արդյունահանվում են հիմնականում էքստենսիվ եղանակով՝ մեծ վնաս հասցնելով շրջակա միջավայրին: Ոչ մետաղական հանքանյութերի արդյունահանման և համալիր վերամշակմանը նպաստող հարկային քաղաքականությունը մշտապես օրակարգային հարցերից է և պետք է լիներ հետազոտության կարևոր ուղղություն:
2. Ատենախոսության 2.2 ենթագլուխը վերնագրված է «Թափոնների գծով բնապահպանական վճարների համակարգային վերանայման ուղիները»: 2018 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ մտած «Հարկային օրենսգրք»-ում «բնապահպանական վճար» հասկացությունը փոխարինվել է «բնապահպանական հարկ»-ով: Բացի այդ, հեղինակը նշում է, որ շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կարևոր գործոններից են պոչատար խողովակաշարերի վթարները, շրջափակող ամբարտակներից ջրի ներծծումը, պոչամբարներից ներծծված ջրերով գրունտային ջրերի աղտոտումը, փոշե կամ գազային արտանետումները, բույսերի, տնային և վայրի կենդանիների վրա ազդեցությունը, որոնք ՀՀ-ում դեռևս դուրս են մնում բնապահպանական վճարների շրջանակից, մինչդեռ գործող օրենսդրությունը կարգավորումը է այս խնդիրը, մասնավորապես՝ ՀՀ կառավարության 1400802006 թվականի N 1110-Ն, 25.02.2005 թվականի N 92-Ն, 02.2005 թվականի N 91-Ն որոշումներով, «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի 6-րդ և 20-րդ



հողվածներով կարգավորվում են վթարների դեպքում հողային, ջրային ռեսուրսների և մթնոլորտի վրա թափոնների ազդեցությունը և բնապահպանական հարկերի հաշվարկը: Իսկ «Հարկային օրենսգրք»-ի 170-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ ենթակետի համաձայն՝ 2020 թվականի հունվարի 1-ից մետաղական օգտակար հանածոների հանքավայրերի համար ոչ վտանգավոր թափոնների համար յուրաքանչյուր տոննայի համար նախատեսվում է 3 ՀՀ դրամ բնապահպանական հարկ:

3. Հեղինակի կողմից առաջարկվում է ռոյալթի հաշվարկման դրույքաչափին հավելումներ կատարելիս հիմք ընդունել ոչ թե ներկայումս կիրառվող հարկվող շահույթ/իրացման շրջանառություն հարաբերակցությունը, այլ հաշվապահական շահույթ/արդյունահանման ինքնարժեք հարաբերակցությունը: Գործող օրենսդրության շրջանակում արդիականացման և/կամ կանաչ տեխնոլոգիաների ձեռքբերման ուղղությամբ կատարված ծախսերը ամորտիզացիայի միջոցով ծախսագրելու որևէ սահմանափակում չկա, հետևաբար ռոյալթի հաշվարկի ժամանակ դրանք կարող է կազմակերպությունը ամբողջությամբ օգտագործել: Ֆինանսական հաշվառման միակ դրական կողմը կարելի է դիտարկել ժամկետների ճկունությունը, որը հետագայում կարող է կազմակերպության համար լրացուցիչ դժվարություններ առաջացնել հարկերը վերահաշվարկելիս: Բացի այդ, նման առաջարկության դեպքում տրամաբանական հարց է առաջանում՝ ինչու՞ ֆինանսական հաշվառումը անել ռոյալթի դեպքում, իսկ շահութահարկի դեպքում՝ ոչ:

4. Ատենախոսության 3-րդ գիտական նորույթի համաձայն՝ լեռնահանքային ընկերությունների դեպքում հաշվետվական տեղեկատվական հոսքերի համակարգման նպատակով առաջարկվել են մի շարք նոր կառավարչական հաշիվներ և հաշվային թղթակցություններ: ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաստատված կազմակերպությունների հաշվապահական հաշվառման հաշվային պլանով սահմանված է անհրաժեշտ հաշվապահական հաշվառման հաշիվների ցանկը, սակայն կազմակերպությունները իրենց տնտեսական գործունեության ընթացքում սեփական նախաձեռնությամբ և իրենց լրացուցիչ կարիքների համար կարող են հաշվառման ժամանակ

ավելացնել այլ հաշիվներ և թղթակցություններ, **հետևաբար նպատակահարմար չէ իմպերատիվ կերպով պարտադրել հանքարդյունաբերող ընկերություններին ավելացնել հաշիվների թիվը**, հակառակ դեպքում՝ ոլորտային հաշիվների նմանատիպ պահանջներ կարելի է սահմանել ձկնարդյունաբերական և այլ ընկերությունների համար ևս, ինչի արդյունքում հաշվային պլանը պարտադիր լրացման հազարավոր տողեր կունենա: Իսկ պետական կարիքների համար նման տեղեկատվությունը կարելի է ստանալ նաև հարկային ստուգման ընթացքում:

### **ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

Վերը նշված դիտողությունները բնավ չեն իջեցնում հետազոտության արժեքը: Սվետլանա Արմենի Մուրադյանի «Հարկային քաղաքականության բարելավման ուղիները ՀՀ լեռնահանքային արդյունաբերության ոլորտում» թեմայով ատենախոսությունը կարելի է որակել, որպես ինքնուրույն գիտական հետազոտություն, որտեղ ներկայացված են ՀՀ լեռնահանքային արդյունաբերության հարկային քաղաքականության բարելավման վերաբերյալ տեսական և գործնական կարևոր խնդիրներ, վերլուծության ու հետազոտության արդյունքում առաջարկված են գիտական նորույթ պարունակող հեղինակային մոտեցումներ:

Հետազոտության արդյունքները քննարկված են Հյուսիսային համալսարանում, իսկ հիմնական արդյունքներն ու բովանդակությունն արտացոլված են հեղինակի կողմից հրատարակած թվով 7 (յոթ) գիտական հոդվածներում՝ ՀՀ ԲՈԿ-ի պահանջներին համապատասխան և հրատակարարան պահին ընդունելի հանդեսներում ու ժողովածուներում:

Ներկայացված սեղմագիրը կազմված է ԲՈԿ-ի պահանջներին համապատասխան և համապատասխանում է ատենախոսության բովանդակությանը և արտացոլում դրա հիմնական դրույթներն ու արդյունքները:

Այսպիսով, Սվետլանա Արմենի Մուրադյանի Ը.00.03 - «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված «Հարկային քաղաքականության բարելավման ուղիները ՀՀ լեռնահանքային արդյունաբերության ոլորտում» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է «ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման

կանոնակարգի» 6-րդ և 7-րդ կետերին, ինչպես նաև թեկնածուական  
ատենախոսություններին ներկայացվող պահանջներին:


Պաշտոնական ընդդիմախոս՝  
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ



Ս. Ն. Պարսյան

24 նոյեմբերի 2020թ.

Ս. Ն. Պարսյանի ստորագրության  
իսկությունը հաստատում եմ



24 նոյեմբերի 2020թ.

